1. ԻՆՖՈՐՄԱՑԻԱ

§ 1.1. ԻՆՖՈՐՄԱՑԻԱ: ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Մեզ շրջապատող աշխարհը շատ բազմազան է, դրանով իսկ՝ հետաքրքիր: Մարդն իր ողջ կյանքում փորձում է ճանաչել այն՝ ուսումնասիրելով ու գիտելիքներ կուտակելով: Բայց մի՞թե միայն մարդն է ունակ ինֆորմացիա ստանալու և վերլուծելու... Եկեք մի պահ հետևենք կենդանական աշխարհի ամենաժրաջան ներկայացուցիչներին՝ մեղուներին, որոնք ծաղկից ծաղիկ թռչելով ու ծաղկափոշի հավաքելով՝ բերում փեթակ են հասցնում: Ակնհայտ է, որ մեղուներն ինչ որ ձևով կարողանում են «ճանաչել» անհրաժեշտ ծաղիկները, և նեկտար հավաքելիս որքան էլ հեռանան՝ անսխալ կողմնորոշվում ու փեթակ են վերադառնում: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ մեղուներն իրենց յուրահատուկ զգայարանների միջոցով շրջակա միջավայրի մասին *ինֆորմացիա* ստանալով և այն վերլուծելով են կատարում իրենց ամենօրյա աշխատանքը:

Բուսական աշխարհին հետևելով՝ կնկատենք, որ ծաղիկներից շատերն արևածագից մայրամուտ գլխիկները թեքելով՝ «հետևում են» արևին, իսկ որոշներն էլ, մայրամուտից հետո պսակաթերթերը փակելով՝ «քնով են անցնում»... Այլ կերպ ասած՝ բուսական աշխարհն էլ շրջապատից անհրաժեշտ ինֆորմացիա «քաղելու» միջոցներ ունի:

Մարդը և կենդանի բնության մյուս ներկայացուցիչները շրջակա միջավայրի մասին նախ և առաջ ինֆորմացիա են ստանում զգայարանների միջոցով:

Տարբերում են ինֆորմացիան ներկայացնելու հետևյալ ձևերը՝ *թվային*, *տեքստային*, *գրաֆիկական*, *ձայնային* և *տեսաինֆորմացիա*:

Թվային տեսքով ներկայացվում են շրջակա միջավայրի *քանակական բնութագրիչները*՝ ջերմաստիճանը, հեռավորությունը, շարժման արագությունը, մարդու քաշն ու տարիքը և այլն:

Համակարգչում մշակվող ցանկացած ինֆորմացիա ներկայացվում է թվային տեսքով:

Տեքստային է այն ինֆորմացիան, որը գրված կամ տպագրված է որևէ տառաթվային կամ նշանային համակարգի միջոցով: Տեքստային ինֆորմացիա են կրում ինչպես գրքերը, նամակները, այնպես էլ մագաղաթների միջոցով մեզ հասած գրությունները, նախնադարից մեզ հասած ժայռապատկերները...

Նկարները, գծագրերը, քարտեզները, լուսանկարներն ու զանազան պատկերները մեկ այլ՝ *գրաֆիկական ինֆորմացիա* են ներկայացնում:

Երգն ու երաժշտությունը, թռչունների դայլայլը, զանազան ձայնային ազդանշանները, մի խոսքով, այն ամենը, ինչ լսում ենք՝ *ձայնային ինֆորմացիա* է:

Տեսաինֆորմացիան ներկայացվում է տեսաֆիլմերի, պատկերների ճեպաշարժի, մուլտֆիլմերի միջոցով:

Օգտակար է իմանալ

- Ինֆորմացիան մարդու գիտելիքների հիմնական աղբյուրն է:
- Գործնականում ինֆորմացիայի *90%*-ը մարդը ստանում է տեսողության, *9%*-ը լսողության և ընդամենը *1%*-ը՝ մնացած զգայարանների միջոցով:
- Աշխարհում մոտ *10 000* տարբեր լեզուներ ու բարբառներ են կիրառվում: